

**“Հայկական ատոմային էլեկտրակայան” ՓԲԸ-ի ղեկավարության հայտարարագիրը ակոհողի և թմրանյութերի օգտագործման նկատմամբ բացասական վերաբերմունքի քաղաքականության վերաբերյալ**

Ատոմային էլեկտրակայանը հանդիսանում է բարձր արտադրական ռիսկով օբյեկտ, որտեղ անձնակազմի վիճակի և պահվածքի նկատմամբ առաջադրվում են բարձր և առանձնահատուկ պահանջներ: Այդպիսի աշխատանքային պայմաններում մարդկային գործոնը, և մասնավորապես, աշխատողների ֆիզիկական ու հոգեկան առողջությունը բացառիկ դեր է խաղում էլեկտրակայանի անվտանգ և հուսալի շահագործման մեջ:

Հաշվի առնելով ժամանակակից հասարակության մեջ այնպիսի բացասական երևույթների տարածումը, ինչպիսիք են ակոհողիզմը և թմրամոլությունը՝ մենք հայտարարում ենք, որ

⇒ համաձայն գործող օրենսդրության՝ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ում մշակվել և գործում է հատուկ միջոցների կոմպլեքս, որն ուղղված է ակոհողը չարաշահող և թմրանյութեր ու հոգեմետ նյութեր օգտագործող անձանց աշխատանքի ընդունումը կանխելուն,

⇒ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն այսուհետ նույնպես ձեռք կառնի բոլոր միջոցները՝ հայտնաբերելու կայանի այն աշխատողներին, որոնք սկսել են օգտագործել թմրանյութեր և հոգեմետ նյութեր,

⇒ ՀԱԷԿ-ում գործում են խիստ արգելքներ, որոնք թույլ չեն տալիս ակոհողի և թմրանյութերի ազդեցության տակ գտնվող անձանց մուտքը կայանի տարածք,

⇒ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն մտադիր է պրոֆիլակտիկ աշխատանք անցկացնել կայանի աշխատողների հետ՝ ակոհողի չարաշահումը և թմրանյութերի օգտագործումը կանխարգելելու նպատակով,

⇒ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն մշտապես առողջ ապրելակերպի պրոպագանդա կվարի, հատկապես աշխատողների երիտասարդ սերնդի շրջանակում, և մտադիր է այն պաշտպանել ակոհողի և թմրանյութերի կործանարար ազդեցությունից,

⇒ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն հաստատունորեն մտադիր է իր աշխատանքը կառուցել այնպիսի առաջնահերթությունների հիման վրա, ինչպիսիք են իր աշխատողների նյութական բարեկեցության բարձրացումը, մշակութային և բարոյական մակարդակի բարձրացումը,

⇒ իր՝ կադրերի տեղաբաշխման հետ կապված գործունեության մեջ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն ելնում է այն անձանց առաջնահերթային նշանակումից առավել պատասխանատու և հեղինակավոր պաշտոնների, որոնց մոտ հստակորեն ձևավորված է բացասական վերաբերմունք ակոհողի և թմրանյութերի նկատմամբ,

⇒ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի յուրաքանչյուր աշխատող անձնական պատասխանատվություն է կրում աշխատանքային և արտադրական կարգապահության կոպիտ խախտման համար և, մասնավորապես, ակոհողի և թմրանյութերի օգտագործման համար,

⇒ համաձայն ՀՀ օրենսդրության՝ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն աշխատանքից կազատի ակոհող և թմրանյութեր օգտագործող աշխատողներին: